

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ ՀԱՅՈՒՆԵԱՅ, ԶՈՐ ԷԱՌ
Ի ՀԵՐԱԿԼԱՅ ԿԱՅՍԵՐԷՆ ԲԻՒՐԵՂ ՏԻԿԻՆՆ ՍԻՆԵԱՅ:

Ի ժամանակս Մօրկայ թագաւորին Յուճաց՝ էր խաղաղութիւն
ամենայն աշխարհիս, զոր ոմանք յառակս արկեալ ասէին՝ թէ
իբրև ի ժամանակս Մօրկայ նստեալ ես յանհոգս. քանզի տի-
րեաց Մօրիկ իշխանութեան Հռոմայեցւոց՝ նգիպտոսի և Միջա-
գետաց, Ասորւոց և Հայոց, Վրաց և Ափխազաց: Եւ ի հարկի
կացոյց զԽոսրով Պարսից թագաւորն, և էառ զքոյր նորա՝ իւր
իկնութեան: Շինեաց և զամուրն Անի քաղաք՝ առ ափն Ախու-
րեան գետոյ: Եւ զմի սմն յիշխանաց Յուճաց՝ Հերակլ անուն
ընկեցեալ էր յաքսորս՝ Մօրիկ արքայն, և էր ի կղզւոջն, որ
հանդէպ է Կամառայ, պստրեալն Հերակլ: Նա առաքեաց զաղ-
տագողի ի Կոստանդնուպօլիս և միաբանեաց զոմանս ընդ իւր
ի գրանէն արքունի. և սպանին զարքայ ի տան իւրում ի ժամ
ճաշոյն, և առաքեալ հանին զՀերակլ ի կղզւոյն և թագաւորե-
ցուցին զնա, և նա ետպան զորդիսն Մօրկայ: Եւ կինն Մօրկայ
ելեալ քնոց առ Խոսրով եղբայրն իւր, և պատմեաց զամենայն
անցս աղէտիցն՝ զոր արարին Հռոմք: Իսկ Խոսրով արքայ վրէժ-
խնդիր եղև արեանն Մօրկայ, և առաքեաց զԽոսրիան զօրաւորն
իւր՝ բազում զօրօք և փղօք յաշխարհն Յուճաց, և աւերեաց
զամենայն աշխարհն Հռոմոց. և ջանաց մտանել ի քաղաքն գե-
րապան՝ Կոստանդնուպօլիս և ոչ կարաց՝ զի ընդդէմ էր ծովն,
բայց դարձաւ ի Յուճաց ի յԱսորեստան ի Շամատունն և ի Պա-
ղեստինէ, և մտեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ աւերեաց և
տապալեաց ի հիմանց: Ջեպիսկոպոս և զքահանայսն սրով կտո-
րեաց և զամենայն քաղաքն ի սուր մահեաց, և առեալ զԽաչն
տէրունական և զայլ աստուածընկալ սրբութիւնս եկեղեցեացն,
և այլ բազում գերիս մարդաբանակս՝ մանկանց և կանանց և
տարաւ յաշխարհն Պարսից: Եւ դարձեալ ի գալ տարւոյն զնոյն
արար, բազում քաղաքս տապալեաց, և անապատ արար զաշ-
խարհն Հռոմոց՝ ի մարդոյ և յանասնոյ: Այս և Հերակլ ար-
քայն ժողովեաց զամենայն զօրսն Յուճաց զՀայոց և զԱփխազաց
և դիմեալ յարևելս եհաս մինչև ի Կարնոյ քաղաք, և տեսեալ
զնա աւերեալ և կամեցաւ շինել զնա: Եւ ի խնդիր էր փրկական
խաչին Քրիստոսի, և էր ի տարակուսանս զի ոչ գիտէր թէ՛ որ-

պէս գտցէ: Եւ մատեաւ ոմն նախարար ի դրանէ նորա՝ որուս
 անուան էր Կոստանդինէ, և ասէ ցարքայն, եթէ հրամայես ծա-
 ռայի քում՝ զինդրելիդ զայդ՝ ես ծառայ քո երթայց և տեղե-
 կացայց թէ՛ ուր իյէ խաչն Քրիստոսի. ասէ արքայ, Զանա՛ եթէ
 հնար է՝ զոր ասեսդ, և նա կազմեաց բնօրին՝ և Զորիս՝ հան-
 դերձս պայծառս և ականս պատուականս, և յարուցեալ գնալ
 ի Գանձակ քաղաքն Շահաստանի, ուր ոսկէքարն գործէ, որ այժ-
 ասի Թուրէզ, և ստուգարանի՛ դա է՝ վրէժ: Եւ լուեալ ս
 քաղաքին Թաւրիզոյ՝ եկին առ այրն Կոստանդի, որ ունէր զ
 վաճառականի. և ասէին ցնա բան մարգարէութեան, ցանկ
 է մեզ յոյսմ՝ առուր գուլ ձեզ՝ ի քաղաքս մեր, զի ամենայն ի
 որ ցանկալի է սրտից մերոց՝ գիւտ է Հոռոմոց, և զոր ինչ ձ
 պիտանի է՝ հնար է գտանել առ մեզ: Լուաւ և արքայն Խոս
 և կոչեաց զայրն, որ վաճառականն էր և ասէ ցնա, յորմէ՞ ա
 խարհէ ես. և նա ասաց, Յուսաց աշխարհէն: Արքայն ասէ, ո
 նին վաճառ պիտանի. և նա ասաց, այո արքայ, և յոյժ պիտ
 նի. ունիմ՝ գանձս ոսկեոյ և արծաթոյ և ականս պատուականս
 հանդերձս պայծառս և անօթս ընտիրս. և բերեալ առաջի՛ զո
 հաճոյ թուեցաւ արքայի և յամենայնէն առեալ՝ ետ զգինոն, և
 որչափ տայր՝ այնչափ առնոյր, և ո՛չ յաւելոյր զգինս վաճառե-
 լոյն վաճառականն: Եւ ել համբաւ նորա ի քաղաքն առհաստ
 րակ և ամենեքին փութայի: Քալ առ նա. և նա Զանայր միայ
 գտանել զտեղի յարկին՝ ուր կայր խաչն Քրիստոսի: Վասն որո
 և եկեալն իսկ էր՝ զնոյն հնարէր ստուգել զտեղին զայն: Եւ է
 այր մի ի դրանն արքունի, և յոյժ բարեկամ՝ արքային. նա ե
 կեալ առ այրն Հոռոմ և գնեաց ի նմանէ անօթս ոսկեղէնս և
 հանդերձս պատուականս, և վաճառականն հարցեալ և դիտա
 ցեալ զառն բարեմտութիւն, եղև բարեկամ՝ նորա վաճառա
 կանն և օժտեալ նմա անօթս ոսկեակարս ըստ արժանաւորու
 թեան առն, և այլ հանդերձս և ականս պատուականս, և եղե
 միմասնց սիրելիք. և կանխէր այրն երևելի որ ըստ օրէ և գայ
 առ վաճառականն, և նա ընդուներ զնա սիրով, Եւ յաւու
 միւսմ ասէ ցվաճառականն. ես ահաւաստի՛ք բազում առուր
 են, որ գամ առ քեզ, այսօր պարտիս և դուր գալ ի տուն իմ
 զի հատուցիյ քեզ փոխարէնս՝ բազում ծախուց քոց, Եւ ն
 ասաց, գամ յօժար կամօք՝ ըստ հրամանաց քոց. և առեալ ս

բաւ զնա ի տուն իւր, և կազմեաց նմա պայծառ բազմականո՛ւ ճաշ բազմածախս և գինի անուշահամն: Եւ իբրև բազմեցան առեալ վաճառականն զհացն՝ միայն ճաշակէր, եհարց զնա այրն պարսիկ և ասաց, է՞ր ոչ ճաշակէ: և նա պատասխանի տուեալ՝ ասէ ցնա, այս երեք տարի է՝ որ ոչ եմուտ իբերան իմ միս և կամ այլ փափուկ կերակուր. ասէ՛ ցնա այրն, զի՞ կամ ընդէ՞ր. ասէ ցնա, քանզի ուխտ կալեալ է իմ, մինչև երկիրպագանեմ՝ փայտին սրբոյ՝ զոր գերեաց Խոռիան զօրովարն ի քաղաքէն Երուսաղէմայ, և ապա ուտեմ միս և այլ ուտեաց կերակուր: ասէ ցնա այրն պատուական, լուր՝ զոր ասեմ քեզ, եթէ հնար էր բերէի ես զնա առ քեզ՝ զփայտն սուրբ, բայց ոչ է հնար ձեռնհաս ումեք լինել, զի իտեղոջն՝ յորում կայ փայտ խաչին, սենեակ է արքայի՝ այլ եթէ կա՛իս տարայց զքեզ հուպ տանն՝ յո՞րում կայ նա: Իսկ նա իբրև լուաւ երկիրպագա առն և իսկոյն յարուցեալ գայ յապարանս Թագաւորին, և ցուցեալ զտունն ասաց, աստ է փայտ խաչին ձերոյ և նա անցեալ երկրպագեաց սուրբ խաչին՝ առաջի տանն, և ապա դարձաւ ուրախութեամբ ի բազմական առն ոիրելոյ: Կերան և արբին և ուրախ եղեն զայն օր, և ի վաղիւն գրեաց նամակ և փութացեալ յղեաց առ Հերակլ արքայ՝ փութով հասանել: Եւ նա էր ի քաղաքն Կարնոյ, և գումարեաց զամենայն զօրսն իւր, զՀայոց և զԹագրաց զԱղուանից և զԱփսազաց՝ զորս միաբանեալ խառնեաց ի զօրսն Յունաց և Հռովմայեցոց, և փութով գնացեալ եհաս յերկիրն՝ նախճրւանայ, Եւ լուեալ Բիւրեղ տի՛ի՛ն Իլինեաց՝ եկն ընդ առաջ արքայի և արար ծախս բազումն ի պատիւ արքայի, և էր նա կին գեղեցիկ և իմաստուն, մինչ զի հաճոյ թուեցաւ յաշս Թագաւորին: Եւ անցեալ գնաց արքայն Հերակլ և եմուտ յաշխարհն Պարսից, և էին ընդ նմա զօրք հեծելոցն բիւրք Մ: Իբրև լուաւ արքայն Խոսրով, կազմեաց և նազօրս իւր և հլ ընդգէմ Հերակլայ ի պատերազմ: Եւ իբրև ճակատեցան միմեանց՝ պարտեցաւ Խոսրով և փախեաւ և եղեն հարուածք և կոտորումն զօրացն Պարսից: Եւ կալեալ զԽոսրով արքայ կապեաց երկաթի կապանօք, և քնացեալ ի քաղաքն պաշարեաց զնա, և յաւուրս երիս առ զԹաւրէզ և քանդեաց զամուրս նորա: Եւ գտեալ զփրկական խաչն Բրիստախի, և ժողովեալ ամենայն զօրացն երկրպագեցին նմա և Թագաւորն ինքն մատուցանէր խունկս և

օրհնէր զԱստուած և ուրախութեամբ մեծաւ տօն մեծ կատարեցին զայն օր: որ էր ի յունիս ամսոյի Ի: Եւ ապա եհար զամենայն աշխարհն Պարսից և յաւար էառ՝ և զբազումս վարեաց ի գերութիւն: և դարձեալ բանակեցան ի Զարեանդ գաւառի: Իսկ ապա յաղաչտնս անկեալ Խոսրով առ կայսր, և նա լուաւ աղաչանաց նորա և արձակեաց զնա ի շղթայից անտի, և դադարեաց ի տեղեոջն աւուրս Լ: Եւ շինեաց անդ եկեղեցի և կանգնեաց անդ զնշան խաչին, և գրեաց ի յարձանի զամենայն իրս յաղթութեան և զժամանակս թուականին, զի էր թուականն Հայոց ԿԲ: Եւ անդ բան տուեալ միմեանց արքայն Խոսրով և կայսրն Հերակլ՝ և եղին սահման զտեղին և կոչեցին զնա հրաման-սարակ: Եւ հրաման ետ արքայ Հերակլ զօրաց իւրոց և կուտեցին հող և արարին բլուր բարձր, և անդ արձակեաց զարքայն Խոսրով, այլ ոչ կացեալ ի բանի նորա՝ զոր դարձեալ կալաւ Հերակլ և սպան զԽոսրով և բարձաւ թագաւորութիւն Պարսից: Եւ Հերակլ դարձաւ ի Հայս՝ ունելով ընդ իւր զսուրբ խաչն, և եկեալ բանակեցաւ ի դաշտին Արտազու՝ մերձ ի քաղաքն Սանատրուկ Շաւարշան: Եւ դարձեալ եկն Բիւրեղ տիկինն Սիւնեաց առ արքայ և խնդութեամբ երկիրպագանէր սրբոյ խաչին՝ բերելով ընդ իւր ալերս արքային՝ առաւել քան զառաջինն, և պատարագ սրբոյ խաչին: Եւ ասէ ցնա արքայ՝ ո՞վ տիկին, դու բազում ծախիւք աշխատ եղեր, և արդ՝ խնդրիս՝ յինէն և արարից քեզ փոխարէն: Եւ տիկինն ասէ ցարքայ, ոչ ինչ պիտոյ է ինձ ի քէն. և ասէ արքայ, ո՞րչափ իցես դու քան զիս հարուստ, որ զաշխատութիւնս քո տարայց զանձամբ իմով, խնդրեա՞ յինէն գաւառ՝ քաղաք և կամ գանձս ոսկւոյ և արծաթոյ, ձիս և ջօրիս: Ասէ տիկինն, ոչ ինչ պիտոյ է ինձ արքայ, բայց զկեանս արքայի կամիմ՝ աջողեալ յԱստուծոյ. այլ թէ գտի շնորհս առաջի քո, ասացից՝ թէ ո՞ւմ նման է արքայ, և ծառայս արքայի, ասէ արքայն, ասա, ասէ տիկինն, նման ես դու արքայ՝ առն ճանապարհորդի, և ես նման եմ օթեան ասպնջակականի: որ առեալ ընդունիցի զեկեալն յուղւոյ, և զինչ և լինիցի պատրաստ է առաջի նորա, և յամենայն զօրութենէ իւրմէ՝ կերակրէ զայրն ուղեոր, իսկ նա հանեալ ի մթերից իւրոց՝ տացէ ասպնջականին: Եւ արդ՝ տէր իմ արքայ, եթէ գտի շնորհս առաջի քո՝ ի բարեաց քոց՝ զոր ունիսդ, տուր ինձ:

Յուրառոտ եկաց արքայն և ասաց, — ո՛չ կարեմ տալ՝ զոր խնդրեցեր յինէն: Եւ յարեալ տիկինն՝ յազօթս եկաց առաջի սուրբ խաչին և երկիրեօագ արքայի և գնաց զճանապարհս իւր: Եւ ասէ արքայն ցմեծամեծս իւր, այրի սիրտ իմ՝ յաղագս բարետոհմ և հաւատարիմ կնոջն այնմիկ, քանզի բազում ծախտ արարեալ առաջի մեր, և դարձաւ գնաց տրտում և ունայն: Եւ անդ էր Յոհան Մայրավանեցին, այր փիլիսոփայ՝ վարդապետ առաքի՛ի, զոր յոյժ սիրէր արքայ. ասէ Յոհան ցարքայ. տէր իմ արքայ, զի՛արդ ո՛չ կարացեր տալ զհայցուածս նորա, ասէ արքայ, զի՛արդ կարացից սուր հասուցանել ի կենսակիր փայտ խաչին. ասէ Յոհան ցարքայ, այսպէս արա՛, դիր սուր մերձ սուրբ խաչին և ասա ցկինն՝ զի արասցէ ազօթս. եթէ կամք լիցի սրբոյ խաչին՝ տացէ նմա մասն ձեռամբ սուրբ Հոգւոյն: Եւ հաճոյ թուեցաւ բանս առաջի արքայի. յղեաց և դարձոյց զկինն, որ եկեալ եկաց առաջի նորա: Ասէ ցնա արքայ, ո՛վ տիկին, մեծ հոգս եղեր դու ինձ, և արդ եկ դնեմք սուր ի պահարանի սրբոյ խաչին, և դու առեալ զեպիսկոպոսուենս և զքահանայս և արասցուր ազօթս պաշտամամբ գիշերոյ. եթէ հաճոյ թուեսցի Տեառն Աստուծոյ տացէ քեզ մասն ըստ հաւատոց քոց: Եւ ուրախացեալ տիկինն երկիրեօագ արքայի: Եւ ի մտանել արև ուն, եկեալ կացին առաջի սրբոյ խաչին՝ թագաւորն և տիկինն՝ երկոտասան եպիսկոպոսօք և բազում քահանայիւք. նաև Յոհան Մայրագոմեցին և այլ վարդապետք ընդ նմո: Եւ բացեալ արքայ զօսկի պահարան սրբոյ խաչին և եղեալ ի նմա դանակ, և ինքն արքայ փակեաց և կնքեաց առաջի ամենեցուն. և հսկեցին զգիշերն ամինայն բազում պաղատանօք՝ սաղմոսիւք և օրհնութեամբ մինչև ցառաւօտն, Եւ ի վաղիւն բացեալ արքայ զիւր կնքեալ փականսն և հաւ տեսին մասուենս երկու հատեալ ի սուրբ խաչափայտէն: և հիացեալ արքայ ընդ հաւատս կնոջն՝ ետ ի նա զմասուենսն ի կենաց փայտէն: Եւ առեալ գնաց տիկինն՝ զսր շնորհեցաւ նմա յԱստուծոյ՝ նշան սուրբ խաչին: Իբրև գնայր ընդ ճանապարհն՝ անցանել ընդ դաշտն Հացուենաց, յանկարծակի նստաւ ջորին յորում էր գանձ Աստուածային՝ մասն կենսատու խաչին, և այլ ո՛չ եղև զնա շարժել ի տեղուջէն և կացեալ տիկինն յազօթս բազում արտասուօք և քահանայք՝ ընդ նմա և եպիսկոպոսուենքն. և ասէր տիկինն, Տէր Յի-

սուս ողորմնա՛ ինձ և մի՛ զրկիբ զիս ի ցանկալի գանձսւցս, զոր դու շնորհեցեր: Տէր, աղախնոյ քում, զոր կամիմ տանել ի քնակութիւն հարց իմաց: Եւ մինչ կային և պաղատէին, ահա՛ եկն այր մի միայնակեաց, որ էր բնակեալ ի լեբիինն Հացուենաց, և ասէ ցոյի: Ինն, ո՛վ բարեպաշտուհի, հրամայեաց Տէր Աստուած բնակել սրբոյ նշանի խաչին յայսմ տեղուջ: Եւ ասպ լուեալ ամենեցուն ի պողատանացն՝ փառս տալին Աստուծոյ, Իօկ բարեպաշտ և աստուածասէր տի՛ ինն՝ շինեաց ի տեղուջ վայելուչ վկայարան և եղանդ զխաչն տէրունական: Աբար վանս միաբանութեան գնեաց զաւանն Հաղուենաց և զբուռնդն աւանինն ետ վանացն, և զօրն գայն, յորում նստաւ ջորին կամաւ սուրբ նշանին, մեծահանդէս ասո՛ն կարգեցին և ամ յամէ զնոյն առնել զենմամբ խոյոց և զուարակաց ի պատիւ սուրբ նշանին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս. Աթոռիս գրադարանի 1600—1700 թուականը գրած ձեռագիրներից միայն 268 ձեռագիրներ ունին յիշատակարան, մնացածներն առանց յիշատակարանի են: Աւելի բազմաթիւ են յիշատակարան ունեցող ձեռագիրներն սկսած 1640—1700. որովհետեւ այդ ժամանակամիջոցումն է ընկնում այն երկարատեւ խաղաղութիւնն, որ Պարսից և Օսմանեանց մէջ տեղի ունեցաւ, համաձայն դաշնագրութեան, եւ որովհետեւ այդ դարի վերջին երեք քառորդներում պատերազմներ չեն եղած Հայաստան երկրում. ուստի և այդ միջոցում գրած ձեռագիրների յիշատակարաններում շատ քիչ յիշատակութիւն է լինում արիւնահեղ պատերազմների և սոցա հետեւանք եղող աւերածութեանց, աւարառութեանց ու ժողովրդական վնասների. այլ գանգատները դառն վիճակի վերայ աւելին վատ և ազահ, կաշառակեր և անարգար Կառավարիչների վարմունքի դէմ, ըստ որում երկարատեւ խաղաղութեան ժամանակ Երևանի խաներից, շատերը կեպեքիչ և ժողովրդեան յափշտակող անձինք են եղած: Իրանց բազմաթիւ պաշտօնատար և անպաշտօն շրբ-